

## ԲԱՌԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Ա. Դ Ի Ր (Ք)

Մատենագրական աղբյուրների և վիժական արձանագրությունների վկայությունների մեջ որոշ է բառիս արտահայտած հիմնական իմաստը՝ դադաղ, գերեզման, դամբարան, որ ծագում է հին հայերենի դնել բայի դիր արմատաձևից (հնիս. dñe-դնել ձևից) կամ ք հոգնակերտով՝ դիրք, որ երկու դեպքում էլ նշանակում է նույն՝ զբաղված, գերեզման, դադաղ:

Վիժական բնագրերում հաճախ են հիշատակվում դիր, դիրք բառերը սովորաբար տապանագրերի նախաբանում. օրինակ, Հովհաննավանքում, Ութվականին. Այս դիրք գերեզմանի հաւր խաչկա, որ էր մշակ էկեղեցո, առանց ամաւթո..., կամ նույն վանքի մի այլ տապանագրում, ԺԳ դ. կեսերին. Այս է դիր քանանաի այ խաչգիտին...<sup>1</sup>, կամ Անիում, Առաքելոց եկեղեցու ԺԳ դարի մի հիշատակագրում. Եւ դիրք ռակերաց նորա բժըշկութի առնէ ամենայն ախտաժեւտաց...<sup>2</sup>:

Սակայն Կարբիի հուշարձանի հարավային պատին փորագրված մի արձանագրության մեջ դիրք գործածված է միանգամայն այլ իմաստով, քան բերված օրինակներում: Բնագիրը փորագրված է զանգակատան կառուցումն ավարտելուց հետո, ԺԴ դարի կեսերին և անծանոթ է գիտությունը, ուստի մեջ ենք բերում տվյալ վկայությունը մեր վերծանությանը. Կամաւն այ, ես՝ Նրանու Կարբոյ տնուտէրս շինեցի ձիթահան եւ եաւու ք Ածածնիս յամէն դրէս շարէք ձէք, եւ սպասատրք խոստացան: Բ: Ժամ զջրամենքն եւ գառիկն...<sup>3</sup>: Այստեղից պարզվում է, որ նվիրատուն վանքին ընծայել է ոչ թե իր շինած ձիթահանքն ամբողջությամբ, առհավետ, այլ նրա եկամուտի որոշ մասը, այն է՝ յուրաքանչյուր դրփից (դիրք > դրփէ (ս) մի շարէք, մի քառորդ դուլլի չափ ձեթ, Դիրք բառը գրական հայերենում այսպիսի նշանակություն չունի և նրա ակունքները պետք է որոնել խոսակցական լեզվում, հայ բարբառներում: Եվ իրոք, Արարիկի և Նրեանի բարբառներում դիրք նշանակում է տախտակյա գործիք, ուրի մեջ նվում են խաղաղը և քամում: Նույն բառը Ն. Բայազետի խոսվածքում արտահայտում է կտավաւոր փշրելուց և շաղախելուց հետո գերանով ճզմելու ու ձեթ հանելու գործողությունը<sup>4</sup>:

1 Տե՛ս Ս. Ա. վ ա գ յ ա ն, Վիժագրական սրբագրումներ, ՊԲՀ, 1968, № 4, էջ 219:

2 Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 26:

3 Արձանագրությունը հրատարակված չէ, առնում ենք մեր հավաքածուից:

4 Հ. Աճ ա յ ա ն, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 279:

Բալահոլտի գյուղերի խոսվածքում դիրք նշանակում է՝ մեկ անգամ ծեծ-վիւիք ցորենի, բունջութի և ուրիշ ընդեղենների չափ<sup>5</sup>։ Անկերե է, որ մեր ար-ձանագրության մեջ դիրք (>դրէս) կիրառված է հենց այս վերջին իմաստով, իրեն ձիթահանքի մեկ անգամվա լցումը, բարձումը, հանույթը։ Նույն դիրք բա-որ դրֆատուն բարգության մեջ (<դիրք-ա-տուն) մեկ անգամ հիշատակված է Զաքարիա Սարկավագի «Պատմագրության» մեջ՝ Հովհաննավանքին նվիրա-րեցված անշարժ ու շարժական ունեցվածքը թվարկելիս։ Աւ ջրաղաց ի Յոհա-նավանք, Աւ ձիթահանք՝ Բւ կալով Բւ դրֆաանով...<sup>6</sup>։

Ն. Բյուղանդացու անտիպ բառարանում դրֆատուն բացատրված է. «Կոսն, ուր դիղանին դամբիւղքն ձիթոյ և կարասն»<sup>7</sup>։ Անհայտ է հեղինակի այս մեկնու-թյան աղբյուրը, սակայն հիշյալ վկայության մեջ դրֆատուն բառը այդ նշանա-կությունը չունի. իրականում կալեւը ու երկու դրֆատունը ձիթահանքին պատ-կանող և նրա մասը կազմող սպասարկու ձեռնարկություն են, որոնց հիշատակ-մամբ հեղինակը նպատակ է ունեցել ցույց տալ ձիթահանքի մեծությունը կամ հղորությունը։ Այստեղից, մեր կարծիքով, դրֆատունը այն սենյակն է, ձիթա-հանքի այն բաժինը, որում տեղավորված է ձիթահատիկները ճմլելու և ձեթը քամելու հարմարանքը, մամլիչը։ Ենթադրվում է, որ քննվող ժամանակաշրջանում ձիթահանքերը կարող էին ունենալ մեկից ավելի դրֆա-տուն, ըստ այդմ էլ որոշվում էր նրանց հղորությունը։

## Բ. Հ Ա Ս Ա Ր Ա . . .

Զաղավանքի 927 (1325) թվակիր արձանագրության մեջ հանդիպող այս իսթարված տառաշարքը առաջին անգամ գիտել և արժեքավորել է ակադ. Հ. Մանանդյանը։ Թվարկելով Հայաստանի բնակչությունից մոնղոլական շրջա-նում դոնձվող հարկերը, նա հաստատ համարում է այդ հարկերից մեկը՝ անաս-նահարկ, եզնատերերից գանձվող տուրք, որ Անիի 98 (1301) թվականի արձա-նագրության մեջ հիշատակված է եզին հազը անվան տակ։ Այս առթիվ Մա-նանդյանը համամիտ է հաստատ կամ հազը բառի այն ստուգաբանությանը, որ տալիս են Յ. Կարստը և Հ. Աճառյանը, ըստ որի բառը ծագում է արաբ. haṣṭa-իլաբախ, մակաղատեղ, ցանկապատ արմատից և վկայված ժամանակաշրջա-նում նշանակել է այն հարկը, որ եզնատերերը վճարել են կալվածատիրոջը կամ իշխանին՝ նրա փարախներից ու գոմերից օգտվելու համար<sup>8</sup>։ Հաստատ տառաշարքի հիշյալ բացատրության համար հիմք է ծառայել Զաղավանքի ար-ձանագրության այն ընդօրինակությունը, որ Շահխաթունյանցից առնելով Կ. Կոստանյանցը հրատարակել է «Վիժական տարեգիր» ժողովածուում<sup>9</sup>։ Իրա-

<sup>5</sup> Տե՛ս Հ. Սարգսյան, Բալու, իր սովորույթները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Կահիրե, 1932, էջ 385։

<sup>6</sup> Զաքարիա Սարկավագի Պատմագրություն, հ. 9, Վաղարշապատ, 1870, էջ 28։

<sup>7</sup> Ն. Բյուղանդացի, Բաղգիրք ստորին հայերենի, Մատենադարանում պահվող ման-րատապակեն, դրֆատուն բառի տակ։

<sup>8</sup> Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. 9, էջ 283, Հ. Աճառյան, Արմ. բա-ռարան, Դ, էջ 19։ J. Karst, Sempadscher Kodex, B. II, էջ 12։

<sup>9</sup> «Վիժական տարեգիր», էջ 161, Հ. Շահխաթունյանց, Ստորագրություն..., Բ, էջ 163։



կտնին ավելի հարազատ և լրիվ է Մ. Սմբատյանցի վերծանությունը, որ հրատարակված է ավելի ուշ՝ 1895 թ., սակայն այստեղ ևս քարի այդ մասը ջարդված լինելու հետևանքով բնագրի տողասկզբները տեղ-տեղ խաթարվել են և սպառիչ չեն կարդացվում, ուստի անհնար է ստուգել հասարա ընթերցման հավաստիությունը<sup>10</sup>:

Հասարա տառաշարքի ընթերցումը և վերծանությունը պարզելու նպատակով մեջ ենք բերում նույն արձանագրության մեր ընդօրինակությունը, որ ստուգվում է լուսանկարով. թվ. ՉՀԴ: Ի պարոնուրե Զաֆարիա, թոռն Աւագին, մեք Դաւիթ եւ Վաճապ եւ Փաթա եւ որդիք մեր Սատրիկ եւ Բաճաղին եւ Աւդալա լի յուսոյն որ առ ած եւ մեր արեւու համար թողաք զվաճաց կոռս զմարդո. եզին, իշո եւ զամենայն ցեղ կոռ եւ զհասարա..., և 4—5 տառատեղ ընդհատումից հետո կարդացվում է... քս միացուցաք...: Այստեղ ավարտվում է արտոնագրի հիմնական բովանդակությունը և շարադրվում անհօքի ձևակերպումը: Հարց է առաջանում. ի՞նչ գրեր են եղել զհասարա տառաշարքից հետո և քս միացուցաք-ից առաջ, կամ ի՞նչպես ամբողջացնել այս խաթարված նախադասությունը: Մեզ հավանական է թվում զհասարա շարքի վերջում վերականգնել և գիրը և կարդալ զհասարակ, որ հոմանիշ է հասարակաց բառին և նշանակում է միասին, անխտիր, առհասարակ, ամբողջովին, բոլորակա՞ն և այլն<sup>11</sup>, Այս իմաստով է գործածված զհասարակ (=հասարակաց) բառը Հովհաննավանքի ԺԳ դարի մի արձանագրության մեջ. մեք էլ զհասարակ ի սք Կարապետս ապսրպարեցաք<sup>12</sup>, կամ Գառնիում, նույն ժամանակների մի արտոնագրում, վերուցաք զՍուճպենց վանի զհասարակաց զզինո եւ զամենայն ցեղ վաճառի տամդա...<sup>13</sup>:

Ինչ մնում է... քս միացուցաք հատվածին, ապա նրանից առաջ կարելի է վերականգնել [ի տուր]քս միացուցաք, որով և կամբողջանա խաթարված նախադասությունը: Մեր այս մասնակի վերականգնումներից հետո բնագրի վերծանությունը կհասկացվի այն իմաստով, որ պարոն Զաֆարիային ենթակա իշխանները վանքի կոռերը վերացնելով՝ դրանք միացրել են տուրքերին, այսինքն աշխատապարհակները փոխարինել են բնամթերքով տրվող հարկերով Հետևվաբար, հասարակ[ի] տառաշարքում առանձին տուրքային կամ պարհակային անվանում տեսնելու վարկածը հիմնված է Զագավանի արձանագրության խաթարված հատվածի ոչ ստույգ վերականգնման վրա և իրրև այդպիսին այնքան էլ համոզիչ չէ:

#### Գ. ՀՈՎԱՏՈՒՆ, ԽՅՅԱՔԱՏՈՒՆ

Այս տառաշարքերը կարդացվում են Վայոց ձորի՝ Ամուղու նորավանքի ս. Կարապետ եկեղեցու գավթի մի նվիրատվական արձանագրության մեջ, որ փորագրված է արևմտյան պատին, ներքուստ, Չի (1271) թվականին: Նվիրագիրը մեղ է հասել զգալի չափով խաթարված վիճակում, որի լիակատար վեր-

<sup>10</sup> Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ժովազարդ գավառին, Վաղարշապատ, 1895, էջ 241,

<sup>11</sup> ՆՁԲ, Բ, էջ 51:

<sup>12</sup> Կ. Ղաֆարյան, Հովհաննավանքը..., էջ 100:

<sup>13</sup> Գ. Գրիգորյան, Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին, ՊՐՀ, 1963, № 2, էջ 262,

ծանությունը որոշ դժվարություններ է հարուցում, այդ պատճառով էլ այն նույնիսկ հրատարակվել է նկատելի տարբերություններով և թերի:

Վերջերս «Դիվանի» հերթական պրակում, որ նվիրված է Վայոց ձորի արձանագրություններին, այս բնագիրը լույս տեսավ առավել կատարյալ և հնարավորին չափ ամրողջացած ընդօրինակությամբ, որ կատարել է Ս. Բարխուդարյանը: Ահա արձանագրության մեր բառաքնության հետ առնչվող հատվածը նրա վերծանությամբ. Ես՝ Սարկալագ երեզ, որդի Մկրտչին, եկի ի նորավանս..., իմ սրտի յաժարութք զիմ գնած հայրենիք... Եղենց իգին ու գիմ հովատունն յու սսմմանովն ու:Դ: խոցտաֆատուն ու:Դ: սենեակն՝ յնղեգնածոր իմ գնած՝ եկեղեցոյս տվի...<sup>14</sup>, հետևում են հատուցման և անեծքի ձևակերպումները:

Այսպիսով, Սարկալագ երեցը վանքին նվիրել է. ա. ինչ-որ գերդաստանի պատկանող կամ ինչ-որ հանդամասում գտնվող այգին (...Եղենց իգին <այգին>), բ. Եղեգնածորում իր գնած 4 սենյակները, գ. մեկ հովատուն, դ. երեք խոցտաֆատուն:

Այս նվերներից այդին և սենյակները հաճախ նվիրաբերվող ունեցվածք են, հանդիպում են նաև այլ հուշարձանների նվիրագրերում և որևէ տարակույս չեն առաջացնում: Հայտնի է նաև, որ տները կամ սենյակները իբրև առևտրի և արհեստագործության հետ առնչվող ունեցվածք, սովորաբար նվիրաբերվում են բաղաձայնությամբ, գյուղաքաղաքներում կամ ավաններում և իբրև այդ իրողության հաստատում կարող է ծառայել նաև այս արձանագրությունը:

Եղեգնածորը կամ Եղեգիսը Վայոց ձորի առավել բարգավաճ ավաններից էր, Որբելյանների վարչական և տնտեսական կենտրոններից մեկը, որ բարձր դարգացման հասավ հատկապես ԺԳ դարի երկրորդ կեսերին: Մինչև օրս էլ Շաաինի և Եղեգիսի միջև ընկած ընդարձակ տարածքի վրա պահպանվել են այդ վաճառաշահ ավանի բազմաթիվ ավերակները: Սարկալագի երրորդ նվերը հովատունն է. ի՞նչ հասկանալ այս անվան տակ: Բնագիրը ընդօրինակողները չեն բացատրում բառս (Քաջբերունի, Ալիշան, Լալայան), Հայագետ Կարստը Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն» գրքում քանիցս հիշատակվող հովատունը («...պատեհ է զայս հիւանդն ի հովտուն պահել») հասկանում է լոգանքի սենյակ, լոգարան<sup>15</sup>: Ստ. Մալխասյանցի բառարանում հովտուն բացատրվում է. բաղնիքներում լողաբանին կից սենյակը, որտեղ լողանալուց հետո հովանում էին և զգեստները հագնում: Հ. Աճառյանը Արմ. բառարանում հով բառահոգվածի տակ նորակազմ գավառական ձևերի մեջ է բերում հովտուն բառը, սակայն առանց բացատրելու դրա արտահայտած իմաստը<sup>16</sup>: Որքան էլ բառակազմորեն ստույգ լինեն Կարստի և Մալխասյանցի մեկնությունները, ակներև է, որ նրանք նկատի ունեն հովտուն կամ հովատուն բառի կամ կազմությունը (հով-տուն, հով-ա-տուն), կամ նրա նշանակությունը միայն վկայված իրադրության մեջ (Մալխասյանցի բառարանում առանց այդպիսի վկայություն):

<sup>14</sup> Ս. Բարխուդարյան, Դիվան, պր. 3, էջ 220:

<sup>15</sup> J. Karst, Wörterbuch des Mittelarmerischen historisch-etymologisch, Մալխասյանցի անվան Մատենադարան, հայագետ 3. Կարստի արխիվ, հովտուն բառի տակ, Հետազա հղումներում՝ WBM:

<sup>16</sup> Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, 3-րդ, էջ 134, Հ. Աճառյան, Արմ. բառարան, Դ, էջ 376:



Ինչպես նկատվում է, մեր օրինակում հավատումը հազիվ թե հանդես գար լոգաառում կամ նրան կից մի այլ սենյակ նշանակությամբ, քանի որ բնագրում պարզ շեշտված է գլխի հավատումն իւր սահմանովն, որ նույն ժամանակների այլ արձանագրությունների համանմանությամբ պետք է հասկանալ՝ հավատումը իւր մեծածախ հաղամասով կամ տնամեծ տաքածությունով: Այս դեպքում արդեն հավատումը չէր կարող մեկ սենյակ կամ լոգարան լինել, քանի որ բնագրում հատուկ չի նշվում լոգարանի կամ բաղնիքի մասին և բացի դրանից հատուկ շեշտվում է հավատումն իւր սահմանովն, որ չէր կարելի ասել մեկ սենյակի համար: Թվում է, այստեղ հավատումն պետք է հասկանալ ամառանոց, ամառանոցի շենք, տուն՝ ամառանոցային վայրում: Որ հավատումն բառն այս իմաստն ունի հաստատում է բնագրում հիշվող հաջորդ նվերը՝ :Գ: խոցտափառումը, որը նույնպես ամառանոցային կամ հովանոցային շինության իմաստ է արտահայտում: Բառս անծանոթ է հայագիտությանը և վկայված է միայն այս արձանագրության մեջ, ըստ այդմ բնագրի հրատարակիչները և ուսումնասիրողները չեն անդրադարձել նրա մեկնությանը: Ալիշանի գրքում, օրինակ, բառս տպագրված է մեծատառով՝ Խոցտափառում և կասկածանքով տեղանուն է դիտվում<sup>17</sup>, Սիսուկը և Քուլուկ-Հովհաննիսյանը նույն բառը ընթերցել են Խոճտափառում և այդ անունով տեղանուն են տեսնում նրանում (Ходзтакарун)<sup>18</sup>, Ստույգ է ընդօրինակությունը Ս. Բարխուդարյանի ժողովածուում, սակայն առանց խոցտափառումն բառի բացատրության<sup>19</sup>:

Մեղ թվում է խոցտափառումն բառի ստուգաբանության համար պետք է նկատի ունենալ նրա կազմությունը՝ խոց-տափ-ա-տում, այսինքն՝ տուն, սենյակ, որտեղ տաք ջրերով ապաքինում են խոցերը, հանքային տաք ջրերով և նրանց ցեխով բուժման լոգարանի սենյակ կամ տուն, առողջարանում հատուկ սենյակ՝ հանքային տաք ջրերի և ցեխի լոգանքներ ընդունելու համար: Այսպիսի շինությունների և ընդհանրապես հանքային ջրերի շրջանում ջրաբուժական կառույցների գոյությունը հաստատում են միջին դարերի մատենագրական աղբյուրները և նյութական մշակույթի հուշարձանները: Մեր օրինակում նվիրատուն հավատումը և խոցտափառումները նվիրել է Ամաղուի վանքին, որ մտածել է տալիս, թե այդ ամառանոցային կամ առողջարանային շենքերը գտնվելիս են եղել վանական կենտրոնից ոչ հեռու, հանքային տաք ջրերի շրջանում: Եվ հիրավի, միջնադարյան Հայաստանի գործնական բժշկության պատմությունից հայտնի է, որ Վայոց ձորի այս շրջանում, Օրբելյանների և Պողոսյանների տիրույթներում բխող հանքային տաք կամ սովորական բուժիչ ջրերը լայնորեն օգտագործվել են շրջակա բնակչության կողմից բուժիչ և կազդուրիչ նպատակներով: Այդ հանքային ջրերից առանձնապես մեծ համբավ են ունեցել Տաթևի վանքի մոտի ջերմային աղբյուրները, Ոսկեպարի, Զերմուկի և հենց Ամաղուի նորավանքի հանքային ջրերը: Հանքային աղբյուրների շրջանում հաճախ կատարվում էին նրանց բուժիչ նպատակներով օգտագործման համար բարեկարգման աշխատանքներ և կառուցվում որոշ հարմարանքներ՝ արհեստական քարե ավազաններ, լոգանքի համար մեկուսացված բաժանմունքներ, երբեմն

<sup>17</sup> Ալիշան, Սիսական, էջ 190:

<sup>18</sup> Матеріалы по археологии Кавказа, 4. XIII, էջ 172:

<sup>19</sup> Ս. Բարխուդարյան, Դիվան, պր. 3, էջ 220, 425:

ամբողջական թաղակապ սենյակներ՝ բուժիչ ջրերի ջրատար խողովակներով և այլ հարմարանքներով, որոնց մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը՝, ևկներև է, որ այդ բնույթի առողջարանային շինություններ էին և Սարկավադ Լրևցի գնած (այս տուրքս ոչ յիմ հաւր հայրենեցեց եւ ոչ իմ աղբաւրացեց, իմ դրամացիքն է...) և Ամաղուի վանքին նվիրած հովատունը և խոցտաբառունը:

#### Դ. Մ Ո Ի Հ Ա Ս Ի Լ

Ձաքարյան Շահնշահի որդի ամիրսպասալար Մխարդրծելը Սանահնի վանքում թույլ է մի Լրկարաշունչ արձանագրություն, որի մեջ երկու անգամ հիշատակված է մուհասիլ բառը, նախ հոգնակի բացառական հոլովածակով՝ ի մուհասիլաց և ապա՝ ուղիղ ձևը, անփոփոխ՝ մուհասիլ: Ահա բնագրի մեջ հետաքրքրող հատվածը պրոֆ. Կ. Ղաֆադարյանի հավաստի վերծանությամբ. եկի վաճառեալս ու գտեալս անմաւոյ գտաք, որ ի մուհասիլաց եւ առաջնորդէ եւ այլ հարկէ ավերած էր եւ եկեղեցիքս փակած..., այսմ հետէ ոչ մուհասիլ եւ ոչ այլ հարկահան Սանահնիս շմտանէ...<sup>21</sup>:

Բառս մատենագրական աղբյուրներում չի վկայված և այդ պատճառով տեղ չի գտել հայերենի բառարաններում: Արձանագրության նախկին հրատարակիչները տարբեր ձևով վերծանելով մուհասիլ տառաշարքը (մահասիլաց, մուհասիլ), նրա մեկնությանը չեն անդրադարձել, հավանաբար վկայված իրավորության մեջ դուրըմբռնելի համարելով: Սակայն, ինչ ականատ է եղել ընդօրինակողների համար, լուրջ տարակարծություն է առաջացնում բնագիրը այս կամ այն առումով ուսումնասիրողների շրջանում. արդարև, ինչպես մեկնաբանել մուհասիլ-ը: Առաջինը այս տերմինը քննում է ակադ. Հ. Մանանդյանը. մոնղոլական շրջանում Հայաստանի բնակչությունից գանձվող հարկերի և տուրքերի ցուցակում տեղ հատկացնելով նաև մուհասիլ կամ մահասիլ հարկին, իսկ գտնում է, որ այն վճարել են Սանահնի եկեղեցիները<sup>22</sup>: Հեղինակը չի զբաղվում մուհասիլ (մահասիլ) բառի ստուգաբանությամբ կամ այդ անունով հարկի բովանդակության քննությամբ և իր տեսությունը կառուցում է արձանագրության՝ իր ձեռքի տակ եղած ընդօրինակության հիման վրա, որն ըստ ամենայնի աղավաղված է, պակասավոր:

Մուհասիլ բառի հիշյալ մեկնության համար հիմք է ծառայել քննվող արձանագրության այն ընդօրինակությունը, որը հրատարակված է Ս. Ջալալյունցի գրքում, իսկ այնտեղից էլ անփոփոխ՝ Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգրում»: Բառիս երկրորդ վկայությունը, օրինակ, ըստ «Վիմական տարեգրի» էջ 141 կարդացվում է. եւ ամենայն եկեղեցիքս ամեն հարկէ ազատեցաք, որ յասմհետէ ոչ մուհասիլ եւ ոչ այլ հարկ Սանահնէս կտան...<sup>23</sup>, մինչդեռ, ինչպես վերևում տեսանք, իրականը պետք է լինի. ոչ մուհասիլ եւ ոչ այլ հարկահան Սանահնիս շմտանէ: Մեղ մնում է հավաստել մուհասիլ բառի այն մեկնությունը, որ տրված է հենց վկայված արձանագրության՝ ոչ մուհասիլ եւ ոչ

<sup>20</sup> Տե՛ս Լ. Օգանեսյան, История медицины в Армении, Ер., 1946, т. I, стр. 241, 183, т. III, стр. 260.

<sup>21</sup> Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., 1957, էջ 125:

<sup>22</sup> Հ. Մանանդյան, Փննական տեսություն..., Գ, էջ 283:

<sup>23</sup> Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն..., Ա, էջ 22, Վիմական տարեգիր, էջ 141:



այլ հարկահան կապակցության մեջ: Հստ այդմ, մոնասիլ ոչ թե եկեղեցուց կամ բնակչությունից հավաքվող հարկ է, այլ այդ հարկերը նշանակող և հավաքող պաշտոնյա, հարկահավաք: Բառիս ստուգաբանությունը ևս հաստատում է այս իրողությունը. արաբ. *hassala* նշանակում է հավաքել, գանձել (տուրք), իսկ *muhassil*՝ այն անձը, որ զբաղվում է հարկ հավաքելով, հարկահան պաշտոնյա, տուրքերը գանձող<sup>24</sup>:

### Ե. ՄՈՒՏԷՐԻԿ (ՄՈՒՏԷՐՈՒԿ(\*))

Բառիս հոգնակի թվի տրական հոլովածված՝ մուտերկերուն (մուտերիկ + եր հոգնակերտը + ու սեռ. տրականի հոլովակաղմիչը և ն ցուցական հոդը) միայն մեկ անգամ հիշատակված է Անիի Առաքելոց եկեղեցու ՉԻՆ (1276) թվականի մի անավարտ արտոնագրում, որով քաղաքի տաղմաշինները թեթևացնում են բնակչությունից գանձվող որոշ հարկեր: Բնագիրը լավ է պահպանվել և նրա ընդօրինակությունը դժվարություններ չի հարուցում: Մուտերկերուն ձևի վկայությունը մեջ ենք բերում Հ. Օրբելու վերջերս հրատարակված վերծանությունից. Թվին : Չին: էլլանին: Մեֆ՝ Անո դաղմաշիֆս... գայս գիր տվաֆ Անո մուտերկերուն, տեսաֆ ու ուծ էր աբաժ անիրաւ դաղմանից ունի (ու մի՞) դարտակ գրաստեն կէս սպիտակ առնուին: Մեֆ՝ վերագրեալ դաղմանիֆս... թռլաֆ..., բնագիրն այստեղ ընդհատվում է<sup>25</sup>:

Նույն արձանագրությունը հրատարակել է նաև Կ. Բասմաջյանը՝ Անիի, Լիզնայրի և Մարմաշենի վիմագրության ֆրանսերեն ժողովածուում: Բնագրի երկու վերծանությունն էլ նույնական են իրականի հետ և էական տարբերություններ չունեն իրար հետ: Միայն Բասմաջյանի գրքում քննության առարկա մուտերկերուն տառաշարքը հրատարակվել է մուֆերկերուն, որը և նյութ է տվել բառիս թյուր մեկնություններին<sup>26</sup>: Հ. Օրբելու «Դիվանում» տեղավորված է արձանագրության ոչ այնքան հաջող լուսանկարը, որի վրա, համապատասխան մասում պարզ երևում է ոչ թե Ք գլխագիրը, այլ Տ-ն, ըստ այդմ, մուտերկերուն ընթերցումը ավելի հավաստի է, քան մուֆերկերուն:

Սակայն բանասիրական գրականության մեջ իբրև հետազոտության առաջն է ընդունվել Բասմաջյանի մուֆերկերուն ընթերցումը, այստեղից էլ բառի ուղիղ ձևը՝ մուֆերիկ: Բառիս առաջին մեկնությունը գտնում ենք հենց վերծանողի՝ Բասմաջյանի մոտ. առանց ստուգաբանության որևէ փորձի, հեղինակը մուֆերիկ բացատրում է՝ հսկիչ, վերակացու, հավանաբար նկատի ունենալով վկայված իրադրության մեջ նրա ենթադրվող նշանակությունը<sup>27</sup>: Հ. Աճառյանը և Սոս. Մալխասյանցը ծանոթ չեն եղել Անիի արձանագրության մուֆերիկ-ին և Յայսմաուրթի մի վկայության առթիվ (լուսայն գրաստի մի

<sup>24</sup> *Տե՛ս* X. K. Баранов, Арабско-русский словарь, М., 1962, էջ 222—223: Մուհասիլ տերմինի մասին ավելի մանրամասն տե՛ս И. П. Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV вв., М—Л., 1960, էջ 353, 385:

<sup>25</sup> Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 22:

<sup>26</sup> K. Basmaǰian, Les inscriptions armeniennes d'Ani de Bagnair et de Mar-machen, Paris, 1931, № 72.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 90, 227:

վարձ է և դկատրն (հացի) մուֆերիկն ուտէ) մուֆերիկ բացատրում են՝ «խոհարարի օգնական, որ է մոխիր թափող, թոնիր մաքրող ու վառող, ջուր բծրող անձը»։ Այս մեկնության համար հիմք է ծառայել մուֆուրիկ > մֆուկ բառի (ծաղում է մուֆերիկ ձևից ու հնչյունի առնմանումով) այն նշանակությունը, որ դիավում է Երևանի բարբառում։ Նույնը կրկնված է հայագետ Կարստի միջին հայերենի անտիպ բառարանում<sup>28</sup>։

Հ. Աճառյանը և Սա. Մալխասյանցը անհրաժեշտ են համարում հատուկ մատնացույց անել այս բառի սխալ մեկնությունը Քաջունու բառարանում, որտեղ մուֆեռիկ կամ մուֆուռիկ բացատրվում է՝ իշապան։

Այլ կարծիքի է պատմաբան, դոցենտ Հ. Ժամկոչյանը, 1955 թ. նա հանդես գալով Երևանի պետական համալսարանի գիտական աշխատությունների ժողովածուում՝ Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին ընդարձակ վերլուծականով, բնագրերի հիման վրա աշխատում էր պարզել Անիի պատմության և ժամանակագրության այլևայլ հարցեր։

Այստեղ հնդիկակը հերքում է Աճառյանի և Մալխասյանցի բացատրությունը և անվերապահորեն հաստատում Քաջունու ստուգաբանությունը մուֆերիկ = արաբերենից փոխառված բառ է և նշանակում է իշապան, ջորեպան, իր գրաստը վարձով տվող, ըստ որում ոչ մի բառով չհիշելով մեծ հայագետների ժխտական կարծիքը Քաջունու այս մեկնության մասին<sup>29</sup>։ Մուֆերիկ-ը հասկանալով ջորեպան, իր գրաստը վարձով տվող, Հ. Ժամկոչյանը տաղմաշիկների հիշյալ արտոնագրի՝ զայս գիր տվաք Անո մուֆերկերուն նախադասությունը մեկնաբանում է այն իմաստով, որ հարկահանները գիր-արտոնագիրը՝ դատարկ դրաստից կես սպիտակ հարկը զիջելու մասին տվել են Անիի ջորեպաններին կամ գրաստը վարձով տվողներին։ Իհարկե, հնարավոր էր քննության առարկա արձանագրության նաև այսպիսի մեկնարանությունը, եթե ստույգ լիներ մուֆերկերուն ընթերցումը և ստուգաբանությունը, սակայն, ինչպես նշել ենք, իրականում, Անիի Առաքելոց եկեղեցու պատին փորագրված է ոչ թե մուֆերկերուն, այլ մուտերկերուն և այդ կապակցությամբ Հ. Ժամկոչյանի անընդունելի ստուգաբանությունը առանց մեր հերքման էլ կորցնում է իր նշանակությունը, մինչդեռ Աճառյանի և Մալխասյանցի բացատրությունը Յայսմավուրքի մուֆերիկ վկայության մասին պահպանում է իր արժեքը։

Իսկ ի՞նչ է նշանակում մուտերիկ տվյալ կապակցության մեջ։ Պարզվում է, որ բառս արաբ. mudarrak = ժանդարմ, դիտակալ, հսկող (daraka = հսկել) բառի փոխառությունն է, (d > տ խլացումով) ըստ այդմ մուտերիկ պետք է հասկանալ քաղաքի կամ շուկայի հսկիչ պաշտոնյա, ժանդարմ, ոստիկան<sup>30</sup>։

Ուրեմն, տաղմաշիկները գրաստի տուրքը իջեցնելու կամ վերացնելու մասին արտոնագիրը տվել են ոչ թե գրաստատերերին, ջորեպաններին, ինչպես ստացվում էր Հ. Ժամկոչյանի ստուգաբանությունից, այլ Անի քաղաքի հսկիչներին, հաբկաճավաք պաշտոնյաներին, որոնք հավանաբար ղարդվում էին քա-

<sup>28</sup> Հ. Աճառյան, Արմ. բառարան, Դ, էջ 1182, Գավառական բառարան, էջ 803, Սա. Մալխասյանց, Բացատրական բառարան, 3-րդ, էջ 367, Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 491, J. Karsl, WBM, մուֆերիկ բառի տակ։

<sup>29</sup> Հ. Ժամկոչյան, Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին, Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի, Ե., 1955, հատ. 47, էջ 113—114։

<sup>30</sup> Sбъу К. Баранов, Арабско-русский словарь, М., 1962, էջ 318։



դաքի բնակչությունից հարկերի գանձումով և պարհակների կատարման հսկողությամբ:

## Զ. Շ Ի Ն Ա Կ Ն Ա Տ Ո Ի Ն

Միջին դարերի գրական աղբյուրներում այս բարդությունը (շինական-առան) չի հանդիպում: ԺԳ դարի վիմագրական հուշարձաններում միայն երկու անգամ հիշատակվում է տարբեր քանակի շինակնատուն՝ իբրև վանական հաստատություններին ընծայված սեփականություն: Առաջին արձանագրությունը փորագրված է Կեչառիսի հուշարձանախմբի Կաթողիկեի արևմտյան մուտքի ճակատակալի և կամարների վրա, ԺԳ դարի առաջին տասնամյակներում, հաղբակյան Վասակի շինարարական վիմագրի վերջում. Ես՝ Վասակ, որդի հաղբակա շինեցի զսր կաթողիկես յազնակնատնութիւն եւ յերկառութիւն կենաց իմ պատռնին Իւանէ աթաբեկի եւ արեան հարազատի իւռյ Շահանշահի...: Գրիս ընծա: Ա: լաւ շինակնատուն ի նորաշենքն երես եւԱ: ի Կարենիսն<sup>31</sup>:

Բնագրի վերջին երկու տողերը Ե. Լալայանը կարդացել է. Գրիս ընծա լաւ շինակն, իսկ Հ. Եղիաղարյանը՝ Գրիս ընծա կալաւ շինակնատուն, որ երկու դեպքում էլ հեռու է իրականից<sup>32</sup>: Վերծանության դժվարությունները միայն այս տարբերությունների մեջ չեն: Առավել տարակուսելի է այն, որ ամբողջ կառուցողական արձանագրությունը, ինչպես և սպասելի էր, շարադրվում է Կաթողիկե եկեղեցու շինարար հաղբակյան Վասակի անունից, առաջին դեմքով (Ես՝ Վասակ, որդի հաղբակա շինեցի...) և միայն վերջաբանը՝ 11—12-րդ տողերը կամ նվիրատվական մասը՝ երրորդ դեմքով, այն էլ երես (<Ես=տվեց) միջին հայերենի բայ-ստորոդյալով՝ :Ա: լաւ շինակնատուն երես: Մյուս կողմից, անսովոր է նաև նվիրագրի նախադասության ստորոգյալի շարադասությունը. երես ստորոգյալը գրված է երկու ուղիղ խնդիրների միջև՝ :Ա: լաւ շինակնատուն ի նորաշենքն երես, :Ա: ի Կարենիսն: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի արձանագրություններում օրինաչափ կլինեի նախադաս ստորոգյալը և դրա ուղիղ խնդիրների թվարկումը հտադաս, տվյալ դեպքում սպասելի էր. երես :Ա: լաւ շինակնատուն ի նորաշենքն եւ :Ա: ի Կարենիսն: Կասկած է հարուցում և այն պարագան, որ բնագրի հիմնական շինարարական բովանդակությունը՝ համապատասխան բարեխոսության բանաձևով՝ սովորականի նման ավարտվում է 10-րդ տողով՝ որք երկրպագէք յիշեսցիք ի Քս աղաշեմ, ուստի վերջին 11—12-րդ տողերի նվիրատվական նախադասությունը սերտորեն չի կապվում բնագրին և հավելվածի տպավորություն է թողնում:

Գ. Հովսեփյանը գիտականորեն ստույգ հրատարակելով Վասակի արձանագրությունը, մեր հիշյալ կասկածները չի հայտնում և վերջաբանը՝ շինակնատուն բարդությամբ բնագրի անբաժանելի մասն է համարում: Այնինչ, միանգամայն ակնհեր է, որ վերջին տողերը սերտորեն չեն առնչվում Վասակի կառուցողական արձանագրության հիմնական բովանդակության հետ և ամենայն հավանականությամբ ավելացվել են բնագիրը կազմելուց և փորագրելուց ինչ-որ ժամանակ հետո: Հնարավոր է ենթադրել, որ կառուցողը Նորաշենքի և Կարենիսի շինակնատները Կաթողիկեին է նվիրել նրա շինարարությունն

31 Գ. Հովսեփյան, հաղբակյանք..., Գ, էջ 8—9

32 Տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք 23, էջ 130, Հ. Եղիաղարյան, Կեչառիսի վանքը և նրա արձանագրությունները, «Եղբաժին», 1955, № XII, էջ 45:

ավարտելուց որոշ ժամանակ անց և որոշել է այդ մասին արձանագրել ոչ թե առանձին, այլ ավելացնելով արդեն փորագրված շինարարական արձանագրության վերջում՝ երկու բնագրերի մեջ կապ հաստատելով՝ գրիս ընծա բառերով:

Շինակցատուն բառի մյուս վկայությունը պահպանվել է Արցախի Դադի վանք հուշարձանի մի նվիրագրության մեջ. ետու իմ հայրենիքն, որ իմ եղբարեքն ետուն ինձ եւ ես կամաւ տուի ի սբ կաթողիկէս: Ա: շուրեցաճող. ի: Շինակցատուն: Ա: չաղաց, շուրջառ պատուական, յառաջնորդութի առ Գրիգորիսի...<sup>33</sup>:

Դադի վանքի այս կարևոր բնագիրը մինչև վերջերս անժանոթ էր բանասիրությանը, իսկ Կեչառիսի արձանագրության շինակցատուն բարդությունը հայտնի էր շինական ընթերցումով, ուստի քննվող բառը և նրա մեկնությունը չենք գտնում հայերենի բառարաններում կամ գիտական գրականության մեջ: Գ. Հովսեփյանը վերծանության մեջ շտկելով Ե. Լալայանի շինական ընթերցումը՝ անբացատրելի է թողնում իր իսկ վերականգնած շինակցատուն բառը: Ն. Աղոնցը Գ. Հովսեփյանի «Խաղբակյանք...» եռահատոր աշխատության մասին դրած կարծիք-գրախոսականում շինակցատուն բարդությունը ստույգ վերլուծելով՝ շինական-ա-տուն, իրական իմաստը մուծ է համարում<sup>34</sup>:

Կարելի էր ենթադրել, թե շինակցատուն-ը շինականի, գյուղացու հետ առնչվող որևէ շինութուն, տուն կամ հաստատություն է, բայց այս դեպքում անբացատրելի կմնա նրա քանակի մասին ցուցումը, որ Դադի վանքում 20 է [ի], ուրեմն և անհարիր այդ ենթադրությանը:

Արդ, ի՞նչ է նշանակում շինակցատուն: Հայտնի իրողություն է, որ Ժ—ԺԳ դարերի վիժագրական հուշարձաններում պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ հոգևոր կենտրոններին գյուղերի, հողամասերի և այգիների հետ նաև նրանց վրա ապրող կամ առանձին մարդկանց՝ շինականների նվիրաբերության մասին: Արձանագրություններում մարդկանց՝ իրրե սեփականության նվիրատվությունը սովորաբար ձևակերպում է կամ հատուկ նշելով նվիրվողի անձնանունը (Սանահնում, ԺԳ դ. սկզբին՝... տուաք... զՄուլէս՝ մարգարէին ռդիին, Բաղնայրում, ԶԺԱ (1262) թ. տվի իՐ: շինական՝ զՄեհրեւան ու գեաշատուր՝ Դուլուսին փեսայն, կամ Զինչիրլուի Սպիտակավոր վանքի նվիրադրում... զՄարտիրոս եւ զՎարդիս ընծա եկեղեցոյս և այլն<sup>35</sup>) կամ ընդհանուր ձևով ցույց տալով նվիրվող ճորտ շինականների քանակը, առանց կոնկրետ անունները նշելու (Խծկոնքում, ՈԿ (1211) թ. եւ ետու... շինական մի, Հաղբատում, ՈԽԹ (1200) թ. էտու յԱյգհատին գեոտ շինական, նույն վանքում, ՈԶԲ (1243) թ. ...հաստատեցի Գ շինական... և այլն<sup>36</sup>): Բացի այս դեպքերից, վիժագրերում որոշակի ցուցումներ կան վանքերին ոչ թե առանձին շինականների, այլ երբեմն նրանց՝ ամբողջ ընտանիքներով կամ գերդաստանով

33 Մ. Տ եր-Մ ո վ ս ի ս յ ա ն, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 95:

34 Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղբակյանք..., Գ. էջ ԻԲ:

35 Կ. Ղ ա ֆ ա դ ա Ր յ ա ն, Սանահնի վանքը..., էջ 123, Ն. Ս ա Ր գ ի ս յ ա ն, Տեղագրությունք..., էջ 188, Վ ի ժ ա կ ա ն տ ա Ր ե գ ի Ր, էջ 104, Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Տարսալիճ Օրբելյանի և Մինա-խաթունի սերունդը, Անթիլիաս, 1947, էջ 18:

36 Կ. Ղ ա ֆ ա դ ա Ր յ ա ն, Հաղբատ, էջ 176, 297, Ա լ ի չ ա ն, Շիրակ, էջ 127, Վ ի ժ ա կ ա ն տ ա Ր ե գ ի Ր, էջ 53:



նվիրաբերելու մասին: Այս իրողությունը նվիրագրության մեջ արտահայտվում է կամ տվյալ գերդաստանի հավաքական ազգանվամբ՝ Գոթոռոնոնք, Աբլասա-դանք, Շատաբեանք (Սանահնում, ՈԿԳ (1214) թ. ետու... գոթոռոնոնք շինա-կան, Մղարթում, ՈՄ (1201) թ. տուաք ի Սանահինեն... գԱբլասադանք ամեն շան ու գեմով..., Սանահնում, ՈԶ (1221) թ. տվաք ի Սանահինեն ի Մադեռոյն գՇատաբեանք ամեն շանով...<sup>37</sup> և այլն), կամ հատուկ նշելով նվիրված տների կամ ընտանիքների քանակը: Այսպես, Դադի վանքի ՈԶԳ (1224) թվականի նվիրագրում Հասանի որդի Գրիգորը վանական կենտրոնին նվիրում է. տուի ի Դադի գեբեզմանս :Դ: տուն շինական<sup>38</sup>:

Մեզ թվում է, Կեչառիսի և Դադի վանքերի արձանագրություններում հիշատակված շինակնատուն բարդությունը հենց ցույց է տալիս, որ նվիրատուները վանքերին օտարել են ոչ թե առանձին շինականների կամ ճորտերի, այլ նրանց ամբողջ ընտանիքը, գերդաստանը, երդը: Կեչառիսի բնագրում հաղ-րակյան Վասակը վանքին երկու շինակնատուն է տվել, մեկը Նորաշենք գյուղից, իսկ մյուսը՝ Կարենիսից, ըստ որում Նորաշենքի գերդաստանը (գուցե նաև Կարենիսինը, պարզ չէ) բնութագրվում է լաւ որոշիչով, որ, մեր կարծիքով, ակնարկ է տվյալ գերդաստանի բազմանդամության և բարձր աշխատունակու-թյան մասին: Դադի վանքի բնագրում նվիրատուն վանքին քսան տուն, երդ է նվիրել, ըստ էության մի ամբողջ գյուղ՝ իր հողատարածություններով (:Ա: չո-րեցանդ), շրաղացով (:Ա. շաղաց) և այլ արժեքներով:

Շինակնատուն բարդության բառակազմական վերլուծությունը, ինչպես տեսանք, տալիս է Ն. Արոնցը, ըստ այդմ, այն բաղադրված է շինական և տուն բառերից, որոնք միանում են ա հոդակապով: Շինական բառի մեջ տեղի է ունեցել երկրորդ նախաշերտ ա հնչյունի կորուստ, իբրև արդյունք շեշտափո-խության: Արդեն նշել ենք, որ հին հայերենի կայուն ա ձայնավորը միջին հա-յերենում և մանավանդ վիմական արձանագրություններում մյուս ձայնավոր-ների նման խիստ անկայուն է և կարող է այլ հնչյունի փոխվել կամ իսպառ ընկնել այլևայլ դիրքերում (հմմտ. ջաղացաց<շաղացաց, Վառհմավ<Վառհամավ, Ագրկուց<Ագարակուց, Հասնա<Հասանա, խանապարին<խանապարին և այլն): Դուստի շինական բառում նախաշերտ ա-ի անկումը որոշ իմաստով օրինաչափ երևույթ է վիմական բնագրերում և չի կարող արգելք լինել շինակնատուն կազ-մության հիշյալ ստուգաբանության համար:

### է, Զ Ե Ի Է Լ Կ Ի

Նորադուզի Աստվածածին եկեղեցու ԺԳ դարի մի արձանագրության մեջ հիշատակված է զբեւէլկի տառաշարքը՝ իբրև վերացված հարկի կամ պար-տույթի անվանում: Բնագիրը կիսով չափ հղծված է և լիակատար վերծանու-թյան չի ենթարկվում, այդ է պատճառը, որ Գեղարքունիքի նախորդ տեղա-գրողները կամ բաց են թողել այն, կամ արտագրել աղավաղված: Մեր քննու-թյան համար հիմք է ծառայել պահպանված տառաշարքերի այն ընդօրինակու-թյունը, որ հնարավորին չափ ամբողջական կատարել է վիմագրագետ Ս. Բարխուդարյանը: Ահա զբեւէլկի տառաշարքը պարունակող կապակցությունը.

<sup>37</sup> Կ. Ղ ա Ֆ ա դ ա ռ յ ա ն, Սանահնի վանքը, էջ 122, 133, Մղարթի խաչարձանի արձանա-գրությունը առնում ենք մեր հավաքածուից:

<sup>38</sup> Մ. Տ ե Ր-Մ ո վ ս ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 95:

Ձէ... տրանց մերոց Խոշափին եւ աթաբակ Սադունին. մեք՝ Նոռաւուաց մեծ եւ խոֆր ամէն մեր սրտի կամաւ գէզին շար եւ զքեւէլկի վեր կալաք...<sup>39</sup>, այնուհետեւ շարագրվում է անեծքի բանաձևը:

Նախ արձանագրության ժամանակի մասին. Ձէ (1258) տարեթիվը չի համապատասխանում Խոշաքի և աթաբակ Սադունի տիրապետության ժամանակներին և հավանաբար թերի է տասնավորը ցույց տվող տառաձևով: Բնագրում հիշատակված Խոշաքը, անշուշտ, Զաքարյան Ավագի և նրա ամուսին Գոնցայի միակ ժառանգն է, որ իր Զաքարիա որդու հետ տիրում էին Բջնիին, Գառնիին և այս տիրություններում արձանագրություններ են թողել ԺԳ դարի վերջին բառորդում: Մյուս կողմից, Կայենի և Մահկանաբերդի իշխանաց իշխան Սադունը, որ նաև դեռահաս Խոշաքի խնամակալն էր Օրբելյանների դեմ վարած հակամարտության մեջ, վրաց թագավորից աթաբակություն է ստացել ստուգապես 1270 թ.: Հայտնի է նաև, որ Խոշաքը և աթաբակ Սադունը, ի թիվս այլոց, մասնակցություն են ունեցել Ջաղավանի նշանավոր ժողովին, որ տեղի է ունեցել 1270 թ.<sup>40</sup>, Այստեղից, մեղ թվում է, որ տարեթիվ մեջ պետք է ավելացնել Ի (20) տասնավորը և կարդալ՝ Ձիէ (1278 թ.), որով և կհարթվեն բնագրի ժամանակագրական անհամաձայնությունները:

Ձեւէլկի բառը այլուստ հայտնի չէ և տեղ չի գտել հայերենի բառարաններում, վկայված կապակցությունից երևում է, որ բառս մոնղոլական շրջանի հարկային կամ պարտութային անվանում պետք է լինի, քանի որ հիշատակված է եզին շար-ի կամ եզնաճաբկի (այլ վիժագրերում՝ եզին ճաբ) հետ միասին, որ վերացրել են Նորատուռի իշխանությունները: Սակայն աղբյուրները իխափանակա՞ն դիվանի հարկացանկում ջեւէլկի (ջեւէլիկ, ջեւէլուկ (°) անունով հարկի կամ սյարհսկի մասին ցուցումներ չեն տալիս: Ավելի ուշ շրջանում, Պարսկաստանի տիրակալ Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի 1505 թ. մի հրովաթուակում հիշատակություն կա Հավուց թառի Ամենափրկիչ վանքից և նրա սպասավորներից գանձվող հարկերի ու հասույթների թվում նաև ջավալիլի պետական պարտավորությունը վերացնելու մասին: Այդ հրովարտակում վկայված հարկային տերմինների մեկնաբանության մեջ հրատարակող Հ. Փափաղյանը ջավալիլի-ն (տառադարձված պարսկերեն բնագրից) ծագած է համարում արաբ. պարս. ջավլակ արմատից, որ նշանակում է բրդի գործվածքից կաշված պարկ՝ ջվալ և գիտում իբրև պետությանը պարկեր մատակարարելու պարտավորություն, որ կարող էր կիրառվել բանակի կամ հարկահավաք հաստատությունների կարիքները հոգալու համար: Մյուս կողմից, նույն տերմինի ջըվալլը (ջավալի, պարկի ճամբար)՝ թուրք. ընթերցումից կարելի է մակարեբել, որ պարկեր մատակարարելու պետական պարտավորությունը երբեմն կարող էր փոխարինվել նաև դրամական տուրքով<sup>41</sup>:

<sup>39</sup> Տե՛ս Մ. Ս մ բ ա տ յ ա ն ց, նշվ. աշխ. էջ 482, Հրատարակված է միայն արձանագրության սկիզբը. քի՞ն Ձէ յիշխուքեան աստածափառ տէրանց մերոց Խոշափին և աթաբակ Սադունին, մեք՝ Նոռաւուաց մեծ և փոֆր...: Հայաստանի պետական թանգարանում պահվող արձանագրության սեռապակու վրայից հավաստի կերպով վերծանվում են բնագրի պահպանված տառաշարքերը:

<sup>40</sup> Տե՛ս Գ. Հ ո վ ս ֆ յ յ ա ն, Ջաղավանից ժողովը, «Շողակաթ» հայագիտական ժողովածու, Կաղարչապատ, 1913, էջ 23—26:

<sup>41</sup> Տե՛ս Հ. Փ ա փ ա ղ յ ա ն, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, հ. 1, ն., 1956, էջ 54, 119:



Այստեղից, հավանական ենք համարում նորադուզի արձանագրության ջեւէլկի-ն համադրել ջալալիդի պարտույթի կամ ջըվալլը տուրքի հետ. որ երկու դեպքում էլ ծագում է պարս. արաբ. ջովլակ=բրդի գործվածքից կարված պարկ, ջլալ արմատից:

Ծիշտ է, ջալալիդի պարտութային տերմինը վկայված է միայն ԺԶ դարասկզբի հրովարտական, մինչդեռ նորադուզի ջեւէլկի-ն ԺԳ դարի է, սակայն այս պարագան չի կարող լուրջ առարկություն հանդիսանալ մեր բացատրության համար, քանի որ հանրահայտ իրողություն է, որ մոնղոլական շրջանի մի շարք հարկային կամ պարհակային արաբ. պարս. անվանումներ, բովանդակության որոշ փոփոխություններով կամ անփոփոխ, լայնորեն գործածվում էին նաև հետագա դարերում (հմտ. մալ, քաղար, ուլախ, իխրաչաթ, խարաջ և այլն):

### Ը. Ա Ի Թ Ա Խ

Միայն մեկ անգամ այս բառը հիշատակված է Իմիրզեկ գյուղատեղում գտնվող Վանստան հուշարձանախմբի վիմագրության մեջ, որ տարիներ առաջ հայտնաբերել, վերծանել և հրատարակության էր պատրաստել հնադետ-վիմագրագետ Աշխարհրեկ Քալանթարը: Վանստանի արձանագրությունները մեծ մասամբ ի հայտ են եկել 1912 թ. այնտեղ կատարված պեղումներով, նրանցից և ոչ մեկը նախկինում չի հրատարակվել: Մեջ ենք բերում ալթախ բառը պարունակող հատվածը Աշխ. Քալանթարի ընդօրինակությամբ. Կաման այլ ես ալթախ Յովանէս միաբանեցա սբ վանքս եւ Վանստանի սբ Ածածնին եւ հոռու արդիւնս...<sup>42</sup>, հետևում է անեծքի ձևակերպումը:

Դատելով Վանստան հուշարձանախմբի վիմագրության տեղալիքից, բնագիրը փորագրվել է ԺԳ դարի վերջերին, անվթար է պահպանվել և հեղինակի վերծանությունը կասկածի տեղիք չի տալիս: Արդ, ի՞նչ է նշանակում հստակ կարդացվող ալթախ բառը:

Վերծանողը չի տալիս բառիս մեկնությունը, այն չենք գտնում և հայագիտական գրականության մեջ:

Ինչպես երևում է բնագրից, ալթախ բառը իբրև որոշիչ դրված է Յովանէս անձնանվան վրա և հավանաբար նրա պաշտոնը, կոչումը կամ զբաղմունքն է նշում, ըստ որում այս վերջիններիս անվանումները պետք է մոնղոլական ծագում ունենային, քանի որ Յովհանէսի նվիրագիրը փորագրվել է ԺԶ դարի վերջերին: Աչքի անցկացնելով իլխանական արքունիքի և դիվանի պաշտոնացանկը, չի կարելի չնկատել այն ընդհանրությունը, որ գոյություն ունի մոնղոլական ortak, urtak տերմինի և մեզ հետաքրքրող ալթախ բառի միջև: Բ ձայնորդի անկումը հայերենում լուրջ առարկություն չէ այս ձևերի ընդհանրությունը որոշելու հարցում, քանի որ հնչյունափոխական այդ իրողությունը լայնորեն հայտնի է հենց նույն շրջանի այլ արձանագրություններում (հմտ. Արշակ>Աշակ (Բագնայր ԺԳ դ.), Արշարունեաց>Աշարունեսաց (Մրեն Ժ դ.), Նրնիս>Ննիս (Մրեն ԺԶ դ.)<sup>43</sup>, արնին>անին (Հավուց թառ ԺԶ դ.)<sup>44</sup>, ջրա-

<sup>42</sup> Քաղում ենք Աշխ. Քալանթարի արխիվից, որ պահվում է ԳԱ հնագիտության և աղագրության ինստիտուտում:

<sup>43</sup> Ն. Ս արգիսյան, Տեղագրությունը..., Վենետիկ, 1864, էջ 181, 193, 197,

<sup>44</sup> Գ. Հ ո վ ս ե փյ ա ն, Հավուց թառի Ամենափրկիչը..., էջ 26:

դաց>ջաղաց (Կոչ Ժ դ.)<sup>45</sup>, ասաբանց>ասրենց (Վաղուդի ԺԳ դ.)<sup>46</sup>, նուսքի>նուսքի (Հաղբատ ԺԳ դ.)<sup>47</sup> և այլն)։

Բաղատրելի է նաև մոնղոլական-ուլղուրական ortak, urtak բառի վերջնահանդ k=խ տառադարձությունը, որ կարող էր տեղի ունենալ կամ անմիջականորեն և կամ դ-ի վրայով՝ k>ղ>խ (համտ. կապալ>ղապալ>խապալ. դալապալ>խալապալ, կաբուրալ>ղաբուրալ>խաբուրալ, դըմըզ>կումիս և այլն)։

Աւրբախ>աւրբախ նշանակում է ընկեր, պաշտոնակից. այս բացատրությունը, առանց վկայության աղբյուրը նշելու տալիս է Կարստը միջին հայերենի իր անտիպ բառարանում<sup>48</sup>. Սակայն մեր օրինակի համար այդ մեկնությունը փոքր-ինչ արդիական է և լիովին չի բացահայտում տերմինի էությունը։ Ortak, urtak ուլղուրերեն բառացի նշանակում է ընկեր, ընկերակից, առևտրի ընկերակից (hasargan ortak), այսպես էին կոչվում մոնղոլական պետության այն առևտրականները, որոնք օգտվում էին արքունիքի հովանավորություններից և իրենց առևտրական գործարքները կատարում ընկերակցելով այլ վաճառականների հետ, հաճախ ամբողջ խմբերով կամ քարավաններով<sup>49</sup>։

Այդ ortak-ներից առավել արտոնյալները վարում էին խանի կամ իլխանական վաճառնու բարձրաստիճան այլ անդամների առևտրական գործարքները կամ ընկերակցում նրանց հետ՝ առևտրական խոշոր գործարքներ կատարելիս<sup>50</sup>։

Իթե արբախ (<աւրբախ) բառի մեր ստուգաբանությունը իրական է, ապա պետք է մտածել, որ քննվող արձանագրության նվիրատու արբախ Յովանէսը մոնղոլական դիվանի արտոնությունից օգտվող հայ վաճառական էր, որ հայտնվելով հյուսիսային Հայաստանի այս գավառում՝ արդյունքներ է ընծայել Վանստան հոգևոր կենտրոնին։

## РАЗЫСКАНИЯ ПО ЛЕКСИКЕ АРМЯНСКОЙ ЭПИГРАФИКИ

С. А. АВАКЯН

### Р е з ю м е

В статье на основе идентичных дешифровок предлагаем этимологии и интерпретации социально-экономических и налоговых терминов դիրք, հասարա, հովատուն, խցտաբատուն, մուհախի, մուտէրիկ, շինակեատուն, ջեւելի, արբախ — засвидетельствованных в армянских надписях периода монгольского владычества (XIII—XIV вв.). Термины դիրք, հասարա, ջեւելի, արբախ установлены и объясняются впервые.

<sup>45</sup> Առնում ենք մեր հավաքածուից։

<sup>46</sup> Ս. Բ ա ռ ի ու ղ ա Ր յ ա ն, Դիվան, պր. 3, էջ 104։

<sup>47</sup> Կ. Ղ ա ֆ ա դ ա Ր յ ա ն, Հաղբատ..., էջ 190, J. Karst, Historische Grammatik... էջ 49—96։

<sup>48</sup> J. Karst, WBM, արբախ բառի տակ։

<sup>49</sup> Ֆրիկի Վասն Արդուն-դանին և Բուղային բանաստեղծության մեջ վկայված է արբախ բառի հոգնակին՝ միտին հայերենի նի հոգնակերտով՝ արբախնի։

Հանց փոխարէն արար Աստուած

Այն Գրիգորին եւ իւր ազգին,

Որ ամենայն մարդ վրկայեաց

Թէ արբախնին անիծեցին։

Վկայության հանգամանակի մեկնաբանություն տալիս է ակադ. Ա. Հովհաննիսյանը (տե՛ս «Ֆրիկը պատմաբանական լույսի տակ», Երևան, 1955, էջ 22—24, տե՛ս նաև՝ Ֆրիկ, Դիվան, Նյու-Յորք, 1952, էջ 424, 685)։

<sup>50</sup> А. Алн-Заде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1956, стр. 237.